ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 384
*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման *աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքը (Վանաձոր բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Վանաձոր համայնքի (Վանաձոր բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

*ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքը (Վանաձոր բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 06-001-0422-0044 կադաստրային ծածկագրով 0.37497 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս | 06-001-0422-0044 կադաստրային ծածկագրով 0.37497 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս, կառուցապատման գոտու հարկայնությունը ԲՆԿԳ-4 (12 վերգետնյա հարկ) |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացված պահանջը (կցվում է):

4. ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Վանաձոր բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Վանաձոր բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ե.Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Լ.Առաքելյան |

Երևան, «2» «դեկտեմբերի» 2025 թ.